600.0087.27.03.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2013 թվականի № 87Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի «Գնումների ոլորտում առկա խնդիրների նվազեցմանն ուղղված բարեփոխումների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №959-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ №4 պաշտոնական պարզաբանումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2008 թվականի մայիսի 7-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №232Ա որոշումը,

2) 2008 թվականի մայիսի 7-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №234Ա որոշումը,

3) 2008 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №236Ա որոշումը,

4) 2008 թվականի մայիսի 7-ի «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №238Ա որոշումը,

5) 2008 թվականի մայիսի 7-ի «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին» №240Ա որոշումը,

6) 2011 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №232Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №358Ա որոշումը,

7) 2011 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №234Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №359Ա որոշումը,

8) 2011 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №236Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №360Ա որոշումը,

9) 2011 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №238Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №361Ա որոշումը,

10) 2011 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №240Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №362Ա որոշումը,

11) 2011 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության գնումների կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանելու մասին» №616Ա որոշումը,

12) 2012 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի №616Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №421Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱՋԱՐՅԱՆ**

ք. Երևան
27 մարտի 2013թ.